ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

31.08.2015թ.
259-ի 9

“Համալսարանականներ” համատիրության
նախագահ պարոն Արտաշես Մամաջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մամաջանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. “Համալսարանականներ” համատիրության կանոնադրությունը,
2. Տեղեկատվություն կառավարման մարմինների կազմի վերաբերյալ. ովքե՞ր են համատիրության նախագահը, վարչության անդամները, վերստուգիչը, կառավարիչը եւ նրանց պաշտոնները զբաղեցնելը հիմնավոր փաստաթուղթ հաստատված ժողովի կողմից,
3. “Համալսարանականներ” համատիրության 2014թ.-ի ֆինանսական հաշվետվությունը՝ հաստատված ժողովի կողմից, ինչպես նաեւ վարչության եւ վերստուգիչի եզրակացությունները,
4. “Համալսարանականներ” համատիրության 2015թ.-ի բյուջեն՝ բացված տեսքով եւ հաստատված ժողովի կողմից, ինչպես նաեւ վարչության եւ վերստուգիչի եզրակացությունները,
5. 2015թ.-ի 1-ին կիսամյակում “Համալսարանականներ” համատիրության ծախսերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան